

## ERNA նախագծի մեկնարկային հանդիպումը ՀՀ ԳԱԱ-ում



Սույն թվականի մայիսի 18-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ «European Researchers' Night in Armenia» (ERNA) նախագծի մեկնարկային հանդիպումը: ERNA նախագիծը հաղթել է «MSCA & Citizens 2025» մրցույթում, որն իրականացվում է Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» «Մարի Սկլոդովսկա-Կյուրիի գործողություններ» ծրագրի շրջանակում (MSCA): ERNA նախագծի գործընկերներն են ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը, «Հայկենսաստեխնոլոգիա» ԳԱԿ-ը, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը:

Հանդիպման մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը և ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոյանը:

«ERNA նախագիծը կդառնա նոր և

յուրահատուկ համագործակցության հարթակ գիտության, կրթության, մշակույթի ոլորտների ներկայացուցիչների և հասարակության միջև խթանելով անմիջական երկխոսությունը, բարձրացնելով գիտության և նորարարության մասին հանրային իրազեկվածությունը», - իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Նա մշտեց գիտնականի դերը ժամանակակից հասարակության և երկրի տնտեսության զարգացման ու պաշտպանության ամրապնդման գործում: «Այս նախագծի շրջանակում գիտնականները, երիտասարդ հետազոտողները, ուսանողները հնարավորություն կունենան շփվելու ուսուցիչների և դպրոցականների հետ՝ հանրամատչելի ներկայացնելով գիտության զարմանալի աշխարհը: Նրանք դա կիրականացնեն գիտափորձերի, ցուցահանդեսների, դասախոսությունների և ինտերակտիվ ծրագրերի միջոցով: Այս լայնածավալ միջոցառումների իրականացման համար ակնկալում ենք ԿԳՄՍ

նախարարության, Երևանի քաղաքապետարանի, շահագրգիռ համայնքապետարանների աջակցությունը: Վստահ եմ՝ համընդհանուր ուժերով կհասնենք նպատակին», - ասաց Աշոտ Սադյանը:

Սարգիս Հայրոյանը մշտեց, որ գիտության հանրայնացումը գիտության ոլորտի զարգացման ռազմավարության ամենակարևոր սյուներից է: «Այն ամենը, ինչ պետությունն արեց գիտության ոլորտում՝ ֆինանսավորման ավելացում, տեխնիկական հագեցում, առանձնահատուկ վերաբերմունք, մեզ համգեցրեց այն մտքին, որ այժմ «զոնակը» գտնվում է գիտության դաշտում, ու գիտության խնդիրն է ցույց տալ իր նշանակությունն ու դերը հասարակության կյանքում և պետության մեջ: Այս ոլորտը սնվում է հասարակության գեներացրած միջոցներով՝ պետական բյուջեով, և մեզ պետք է առավելագույն արդյունավետություն նման նախագծերից: Այս մեծ պատասխանատվությունը պետք է կարողանանք պատշաճ կրել», - ասաց Սարգիս Հայրոյանը:

ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչության պետ Սոֆի Աճեմյանը մշտեց, որ ERNA նախագծի շրջանակում գիտահանրամատչելի միջոցառումների արդյունքում լայն հասարակությանը կներկայացվեն գիտության կարևորությունն ու առանձնահատկությունները և դերը ժամանակակից հասարակության զարգացման գործում:

Առաջիկա երկու տարիներին նախատեսվում է ավելի քան 220 միջոցառում և շուրջ 40. 000 մասնակից: ERNA-ի հիմնա-



կան միջոցառումը պլանավորվում է անցկացնել 2026 և 2027 թվականներին՝ սեպտեմբերի վերջին ուրբաթ և շաբաթ օրերին, Երևանում, Վանաձորում և Գյումրիում:

Նախագծի գործողությունները ներկայացրեց ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչության միջազգային կապերի պատասխանատու Անահիտ Խաչիկյանը: «Մեր նպատակն է ERNA-ի գովազդային արշավը հասցնել բոլոր մարզեր՝ ապահովելով ուսուցիչների և դպրոցականների ակտիվ մասնակցությունը լայնածավալ միջոցառումներին: Այստեղ կարևոր է նաև ներառականության ապահովումը, և պետք է համապատասխան պայմաններ ստեղծվեն հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցության համար», - մշտեց Անահիտ Խաչիկյանը:

Հանդիպման մասնակիցները քննարկեցին նախագծի հիմնական գործողությունները, հասարակության և շահառու կողմերի ներգրավման արդյունավետ ուղիները՝ գիտության նկատմամբ հանրային հետաքրքրվածությունն ու իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին**

## «Առաջընթաց՝ արդյունավետ գիտությամբ. ԱԱԳ-2026» ամենամյա գիտաժողովը

Մայիսի 11-16-ը Դիլիջանում տեղի ունեցավ «Առաջընթաց՝ արդյունավետ գիտությամբ. ԱԱԳ-2026» գիտաժողովը, որը կազմակերպել էր ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն:

Ողջունելով մասնակիցներին՝ ԿԳՄՍ նախարար ժամնա Անդրեասյանը մշտեց, որ ամենամյա գիտաժողովը դարձել է գիտության զարգացման շուրջ համատեղ քննարկումների, փորձի փոխանակման և տարբեր գիտական ուղղությունների միջև համագործակցության ձևավորման կարևոր հարթակ: Նախարարի խոսքով այս տարվա թեման և խորագիրը շեշտադրում են գիտության առանցքային դերը հանրային և պետական զարգացման գործում:

«Գիտությամբ զբաղվելն ինքնին արժեքավոր գործունեություն է, որովհետև հենց գիտական միտքն է առաջ մղում մտածողությունը, մեր առջև դնում նոր խնդիրներ ու զարգացման ուղիներ բացում: Բոլորովին պարտադիր չէ, որ հենց սկզբից պարզ լինի, թե որ թեմաներն են հետազայում կարևոր զարգացում ունենալու: Գուցե հարյուր թեմաներից միայն երկուսն են դառնալու նշանակալի ուղղություններ, բայց եթե այդ հարյուրի շուրջ չաշխատենք, չենք ունենա նաև այդ երկուսը: Գիտության զարգացման տեսանկյունից պետք է շատ ուշադիր լինենք հասկանալու, թե ինչպես է գիտությունն ազդում պետության և հասարակության կյանքի վրա», - մշտեց ժամնա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ համաժողովում առա-



ջին անգամ քննարկվելու են նպատակային ծրագրերը, որոնց միջոցով պետական մարմինների կարիքներից բխող հետազոտական թեմաներ են իրականացվելու գիտնականների մասնակցությամբ:

Նախարարն առանձնահատուկ կարևորել է գիտության հանրային հաշվետվողականությունը՝ հիշեցնելով, որ 2018 թվականի համեմատ գիտության ոլորտի ֆինանսավորումն աճել է 2.8 անգամ, էապես ավելացել են սարքավորումների ձեռքբերման և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ուղղությամբ ներդրումները:

Նա կարևորել է նաև Գիտությունների ազգային ակադեմիայի դերը՝ որպես կրթական և գիտական համակարգերի միջև համագործակցության ամուր օղակ: Անդրադառնալով գիտական գիտելիքների հանրայնացման խնդիրներին՝

ները: Դրամաշնորհային ծրագրերի դեկավարների բանավոր զեկույցներից բացի՝ «Gong Show» ձևաչափով կներկայանան նաև երիտասարդ հետազոտողները՝ կարճ ելույթներով խոսելով իրենց հետազոտությունների մասին:

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ իրականացվող գիտական միջոցառումը, որը մեկնարկել է 2022 թվականին՝ որպես «Ամենամյա ամփոփիչ գիտաժողով», կազմակերպվում է արդեն հինգերորդ տարին անընդմեջ: Գիտաժողովը նպատակ ունի խթանելու գիտահետազոտական խմբերի միջև համագործակցությունը, ամրապնդելու միջգիտակարգային կապերը, նպաստելու Հայաստանում ժամանակակից գիտական միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը: Արդեն 5 տարի գիտաժողովը հարթակ է ստեղծում մասնագիտական քննարկումների և միջգիտակարգային ակտիվ փոխգործակցության ձևավորման համար: Ներկայացված զեկույցները վերաբերում են գիտության տարբեր ճյուղերին՝ բնագիտական, ճարտարագիտական, բժշկական, ագրարային, հայագիտական, հումանիտար, հասարակագիտական և այլ ուղղություններ:

Գիտաժողովի բացմանը ներկա էին և ողջունի խոսքով հանդես եկան նաև Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սադյանը և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանը:

Նախարարը մշտեց, որ ապատեղեկատվության և մեղիա աղմուկի պայմաններում առավել կարևոր է դառնում գիտական փաստերի և ճշմարիտ տեղեկատվության մատչելի ներկայացումը:

ժամնա Անդրեասյանը նաև մշտեց, որ Կառավարության որոշմամբ արդեն հաստատվել են ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թթ. ռազմավարական ծրագիրն ու գերազանցությունները՝ ընդգծելով, որ առաջիկա տարիներին ուղղորդում մեծ է համատեղ աշխատանք կա իրականացնելու:

«Առաջընթաց՝ արդյունավետ գիտությամբ. ԱԱԳ-2026» գիտաժողովին առաջին անգամ հրավիրվել են մասնակցելու նաև «Կին ղեկավարների առաջնադասումն ուղղված ծրագիր», «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր», «PostDoc-Armenia» դրամաշնորհների շահառու-

# ՀՀ ԳԱԱ-ում կայացավ Հայկական համադպրոցական գիտության փառատոնի՝ 2026 թվականի հաղթող նախագծերի պարզևատրման արարողությունը



Ս/թ. մայիսի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքում տեղի ունեցավ Հայկական համադպրոցական գիտության փառատոնի՝ 2026 թվականի հաղթող նախագծերի պարզևատրման արարողությունը: Միջոցառմանը մասնակցեցին գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներ, տասնյակ դպրոցների մանկավարժներ և սաներ: Մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

Աշոտ Սաղյանը շեշտեց գիտության և կրթության զարգացման կարևորությունը՝ որպես ռազմավարական առաջնահերթություն: Այս համատեքստում նա կարևորեց Հայկական համադպրոցական գիտության փառատոնը: «Ցանկացած երկրի ուժի հիմքում մարդիկ են իրենց գիտելիքներով, գիտական կարողություններով և ստեղծարար ներուժով:

Սակայն ամեն ինչ սկսվում է դպրոցից: Դպրոցում պետք է ձևավորվի հետաքրքրությունը գիտության նկատմամբ, երեխան պետք է հասկանա, թե ինչ է գիտությունը, ինչ է գիտական գործունեությունը, ինչ նշանակություն ունի հետազոտությունը, և ինչպես կարող է գիտելիքը փոխել հասարակությունն ու պետությունը: Հենց այդ հիմքի վրա են ձևավորվում ապագայի գիտնականներ, մասնագետներ և գիտական քաղաքացիներ», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Արաքսիա Սվաջյանը շնորհակալություն հայտնեց փառատոնի մասնակից ուսումնական հաստատությունների մանկավարժներին և սաներին ակտիվության, նախաձեռնողականության և կատարած աշխատանքի համար: «Գիտության փառատոնին մասնակցությունը վկայում է այն մասին, որ նախագծի թեման ընտրելիս լրացուցիչ ջանք եք դրել, հոգացել եք նորարարական վերջնարդյունքներ ունենալու մասին, փոր-

ծել եք գտնել հասարակության համար հետաքրքրական թեմաներ: Ամեն անգամ շփվելով փառատոնի մասնակիցների հետ՝ ավելի եմ համոզվում՝ դուք ունեք մտքի մեծ թռիչք, նորարարական գաղափարներ: Որպես պետություն՝ մեր խնդիրն է ապահովել այնպիսի դպրոց, որը կխթանի ձեր ստեղծագործական, քննադատական, նորարարական մտածողությունը: Դպրոցում գիտելիք ստանալը շատ կարևոր է, և այսպիսի աշխատանքներն օգնում են աշակերտներին ավելի լավ պատկերացնելու, թե գիտելիքը ինչպես կարող է կիրառվել», - ասաց Արաքսիա Սվաջյանը:

Հայկական համադպրոցական գիտության փառատոնում հաղթող ճանաչված 62 նախագծի հեղինակները՝ շուրջ 120 սան, պարզևատրվեցին մրցանակներով:

2026 թվականին փառատոնին մասնակցել է Երևանի և ՀՀ մարզերի 40 ուսումնական հաստատության միջին և ավագ դասարանների շուրջ 140 սան՝ ներկայացնելով 78 անհատական կամ

խմբային նախագիծ հինգ հիմնական անվանակարգերում.

«Մաթեմատիկա և ծրագրավորում» (14 նախագիծ)

«Ֆիզիկա և աստղագիտություն» (10 նախագիծ)

«Քիմիա» (18 նախագիծ)

«Կենսաբանություն» (18 նախագիծ)

«Հասարակական գիտություններ» (18 նախագիծ)

Յուրաքանչյուր անվանակարգում սաներն արժանացել են I, II, III կարգի մրցանակների, պատվոգրերի, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի մրցանակների: Փառատոնի մրցանակակիր նախագծերից երկուսը կներկայացվեն ԱՄՆ Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքում կայանալիք ԱՄՆ «Regeneron» միջազգային գիտական և ճարտարագիտական տոնավաճառում, երկուսը՝ Գերմանիայի Քիլ քաղաքում կայանալիք ԵՄ երիտասարդ գիտնականների EUCYS մրցույթում:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին**



## Եվրոպայի օրվան նվիրված ցուցահանդեսին ՀՀ ԳԱԱ-ն ներկայացրեց ERNA նախագիծը



«Գիտությունը՝ քաղաքացիների համար, քաղաքացիները՝ գիտության. դիմակայելով մարտահրավերներին՝ կերտենք ապագան. այս կարգախոսով ս/թ. մայիսի 10-ին Երևանի Ազատության հրապարակում Եվրոպայի օրվան նվիրված ցուցահանդեսին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) որպես համակարգող, ներկայացրեց ERNA «European Researchers' Night in Armenia» նախագիծը:

ՀՀ ԳԱԱ-ի ERNA «European Researchers' Night in Armenia» նախագիծը հաղթել է Եվրոպական հանձնաժողովի կողմից իրականացվող «MSCA & Citizens 2025» մրցույթում, որն իրականացվում է Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շրջանակում (MSCA): Հաթի է նշել, որ «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագիրը դոկտորական կրթության և հետդոկտորական վերապատրաստման ոլորտում Եվրոպական միության առաջատար նախաձեռնությունն է, որը 2026 թվականին նշում է իր 30-ամյակը: 1996 թվականից ի վեր ծրագիրը կարևոր դեր է խաղացել հետազոտության և նորարարության զարգացման գործում՝ աջակցելով ավելի քան 150,000 հետազոտողի, այդ թվում՝ 23 Նոբելյան մրցանակակիրների:

Ծրագիրը դարձել է Եվրոպական հետազոտական համակարգի հիմնասյուններից մեկը և գիտական գերազանցության խորհրդանիշ՝ խթանելով շարժունությունը գիտակարգերի, ոլորտների և երկրների միջև, ինչպես նաև նպաստելով լավագույն տաղանդների ներգրավմանը և զարգացմանը:

ERNA նախագծի գործընկերներն են ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը, «Հայկենսատեխ-

նոլոգիա» ԳԱԿ-ը, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը: Նախագծի շրջանակում 2026-2027 թվականներին Հայաստանում առաջին անգամ կանցկացվեն «Եվրոպական հետազոտողների գիշեր» և «Հետազոտողները դպրոցներում» լայնածավալ գիտահանրամատչելի միջոցառումները: Նպատակն է մոտեցնել գիտությունն ու հետազոտողներին հասարակությանը և ցույց տալ գիտության դերը մեր առօրյա կյանքում: ERNA-ն հրավիրում է գիտությունը բացահայտել հետաքրքիր ձևով, հասկանալ, թե ինչպես է հետազոտությունը նպաստում հասարակական մարտահրավերների լուծմանը, ծանոթանալ գիտական բացահայտումների հետևում կանգնած մարդկանց:

Եվրոպայի օրվան նվիրված ցուցահանդեսին մասնակցեցին այն հայ հետազոտողները, ովքեր մասնակցել են MSCA ծրագրերին: Ներկայներին ողջունեցին Հայաստանում Եվրամիության դեսպան Վասիլիս Մարագոսը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռոբերտ Աբխողովյանը:

Եվրամիության դեսպանը նշեց՝ Եվրոպայի օրը խորհրդանշում է միասնություն, համագործակցություն և խաղաղություն: Իսկ ԵՄ-Հայաստան գործընկերությունը հիմնված է ընդհանուր արժեքների վրա, որոնք արդար ու բարեկեցիկ հասարակության հիմքն են: Նա կարևորեց Հայաստանի կառավարության և Հայաստանի ժողովրդի հետ միասին ամուր գործընկերությունը, որի վկայությունն է օրերս Երևանում անցկացված Եվրոպական քաղաքական համայնքի զագաթնաժողովը:

Այս տարի Եվրոպայի օրը Հայաստանում նշվում է «Հայաստան-ԵՄ. ավելի մոտ, քան երբևէ» խորագրի ներքո: Ռոբերտ Աբխողովյանը նշեց, որ այսօր Հայաստանը և Եվրոպական միությունը միմյանց ավելի մոտ են, քան երբևէ՝ թե՛ քաղաքական երկխոսության, թե՛ տնտեսական համագործակցության և թե՛ մարդկանց միջև ձևավորվող և առավել զարգացող կապերի առումով:

## Մաթեմատիկայի ինստիտուտում կայացավ «OTHA SPRING 2026» միջազգային գիտաժողովը

Մաթեմատիկայի ինստիտուտում անցկացված «OTHA SPRING 2026» միջազգային գիտաժողովը մեկ հարթակում միավորեց 12 երկրների մաթեմատիկոսների՝ քննարկելու օպերատորների տեսության, հարմոնիկ անալիզի և դրանց կիրառությունների արդի հարցերը: Գիտաժողովը կազմակերպել էին Մաթեմատիկայի ինստիտուտը և ՌԴ Հարավային դաշնային համալսարանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ Մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Ռաֆիկ Արամյանը նշեց, որ գիտաժողովը կարևոր հարթակ է մաթեմատիկայի ոլորտում նոր գիտական արդյունքների տարածման տեսանկյունից: Այն հա-



մայնվում է մասնագետների աշխարհի տարբեր երկրներից և ամրապնդում համագործակցությունը:

ՌԴ Հարավային դաշնային համալսարանի Տարածաշրջանային գիտակրթական մաթեմատիկական կենտրոնի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսեյ Կարապետյանը նշեց, որ «OTHA SPRING» միջազգային գիտաժողովի անցկացումը Հայաստանում արդեն ավանդույթ է դարձել. այս տարի այն անցկացվեց Մաթեմատիկայի ինստիտուտում 4-րդ անգամ: Տարեցտարի այն ընդգրկում է ավելի շատ երկրներ և ուղղությունների լայն շրջանակ՝ ձևավորելով լայն միջազգային փորձագիտական համայնք:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում գեկուցումներով հանդես եկան առաջատար գիտնականներ ԱՄՆ-ից, Ավստրիայից, Գերմանիայից, Իսպանիայից, Իտալիայից, Իտալիայից, Հայաստանից, Մեքսիկայից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Ֆինլանդիայից: Գիտաժողովի արդյունքները կիրառական «Springer» հրատարակչության կողմից լույս տեսնող «Journal of Mathematical Sciences» ամսագրում:

# Գիտության և կրթության նվիրյալը

(Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Լրացավ քվանտային էլեկտրոնիկայի, ռադիոֆիզիկայի և ռադիոաստղագիտության ոլորտի մեծանուն գիտնական, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախկին նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի Մարտիրոսյանի 90-ամյակը:

Ռ. Մարտիրոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: 1943-53 թթ. նա սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, որից հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետ, այն ավարտել է 1958 թվականին գերազանցությամբ՝ ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում:

Ռ. Մարտիրոսյանի՝ որպես գիտնականի կայացման գործում վճռորոշ դեր է ունեցել համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական, Նոբելյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ա. Պրոխորովը, ով ղեկավարել է նրա ասպիրանտական աշխատանքը ԽՍՀՄ ԳԱ Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտում 1960-63 թվականներին: Ասպիրանտական տարիներին նա մի շարք ուսումնասիրություններ է անցկացրել դեցիմետրային ալիքի երկարության տիրույթի համար արդյունավետ քվանտային ուժեղացուցիչների ստեղծման ուղղությամբ:

Ռ. Մարտիրոսյանի գիտական ողջ գործունեությունը սերտորեն շաղկապված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի (ՌՖԷԻ) հետ, որտեղ նա 1968-70 թթ. աշխատել է որպես լաբորատորիայի վարիչ, 1970-80 թթ.՝ գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, իսկ 1980-2006 թթ.՝ ինստիտուտի տնօրեն:

Վաստակաշատ գիտնական իրավամբ համարվում է ռադիոաստղագիտության հետազոտություններում քվանտային ուժեղացուցիչների կիրառման ռադիոհաճախներից մեկը: Նրա կողմից մշակված 21 սմ ակտիվ ռեզոնատորներով քվանտային ուժեղարարը ԽՍՀՄ-ում առաջինն էր, որը հետագայում հաջողությամբ կիրառություն գտավ ռադիոաստղագիտական հետազոտություններում: RT-22-ը ռադիոաստղագիտակի վրա տեղադրված ընդունող համակարգի զգայունությունը մեծացրեց 7-8 անգամ անընդհատ սպեկտրում և 15 անգամ սպեկտրալ ուսումնասիրություններում, ինչը հանգեցրեց Գալակտիկայում ջրածնի ճառագայթման գծերի կառուցվածքի և Խեցգետնի միգամածությունից ռադիոճառագայթման տեղագրության վերաբերյալ նոր արդյունքների ստացման:

1964 թ.՝ դոկտորական թեզը պաշտպանելուց հետո, Ռ. Մարտիրոսյանը սկսեց ակտիվ հետազոտություններ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում՝ ստեղծելով նոր ակտիվ նյութերի որոնման և ուսումնասիրության հետազոտական ուղղություն, որոնք անհրաժեշտ էին տարբեր միկրոալիքային տիրույթներում բարձր արդյունավետության քվանտային ուժեղացուցիչների ստեղծման համար:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ակտիվ բյուրեղների ուժեղացման բնութագրերը որոշելու համար անվանի գիտնականի մշակած մեթոդը, հետազոտություններ արհեստական զնուխտե բյուրեղների սինթեզի ուղղությամբ, քվանտային ուժեղացուցիչների արդյունավետությունը բարձրացնելու նոր եղանակների մշակումն ու ներդրումը, ինվերսիայի սխեմայի ու-



սումնասիրությունը և այլն: Նրա կողմից մշակված ալիքատարային քվանտային ուժեղացուցիչը, որը գործում է 1.35 սմ ալիքի երկարության տիրույթում և հաջողությամբ տեղակայվել է ամենամեծ ռադիոաստղագիտակի՝ PATAH-600-ի վրա, 14 անգամ մեծացրել է ընդունող համակարգի զգայունությունը: Այն օգտագործվել է մի շարք տիեզերական մագերային աղբյուրների ռադիոճառագայթման ուսումնասիրություններում՝ ստանալով նոր գիտական տվյալներ, որոնք բացահայտում են դրանց ֆիզիկական հատկությունները: Ռ. Մարտիրոսյանի և նրա աշակերտների աշխատանքը գիտության և տեխնոլոգիայի տարբեր ոլորտներում բարձր զգայունության ընդունող համակարգերի մշակման և ներդրում գործում արժանացել է Գիտության և տեխնոլոգիայի բնագավառում ՀՀ պետական մրցանակի (1988 թ.):

Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությամբ ՌՖԷԻ-ն ակտիվորեն մասնակցել է մի շարք համամիութենական և միջազգային ծրագրերի: Այնտեղ մշակված բարձր զգայունության ռադիոընդունող սարքավորումները լայնորեն օգտագործվել են «Природа» և «Океан» տիեզերական ծրագրերում՝ բնական ռեսուրսների, ինչպես նաև ջերմային կոնտրաստային ուսումնասիրությունների, ռադիոաստղագիտական և կենսաբժշկական հետազոտությունների համար:

Նրա մասնակցությունը «Ինտերկոսմոս» տիեզերական հետազոտությունների ծրագրին, մասնավորապես «Վեգա» նախագծին, շատ արդյունավետ էր: ՌՖԷԻ-ում մշակված սարքավորումները հաջողությամբ օգտագործվել են շատ երկար բազային ռադիոհետազոտությունների ստեղծման և շահագործման մեջ, որը հնարավորություն է տվել բարձր ճշգրտությամբ չափելու օդապարիկային զոնդերի հետագծերը Կենտրոնի մթնոլորտում: Ռ. Մարտիրոսյանի՝ միլիմետրային տիրույթում քվանտային ուժեղացման ֆիզիկական հիմքերի հիմնարար հետազոտություններին նվիրված աշխատանքների շարքը գիտության և տեխնոլոգիայի բնագավառում արժանացել է Ուկրաինայի պետական մրցանակի (1989):

Սկսած 1987 թվականից՝ ՌՖԷԻ-ում Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությամբ անցկացվել են հիմնարար և կիրառական հետազոտություններ բարձրջեր-

մաստիճանային գերհաղորդականության ոլորտում: Բարձրջերմաստիճանային գերհաղորդիչից պատրաստված կամրջային թաղանթային կառուցվածքներում առաջին անգամ դիտվել է միկրոալիքային տիրույթում ինտենսիվ քվազի-մոնոքրոմատիկ ներքին ճառագայթում: Ցույց է տրվել, որ այս ճառագայթումն առաջանում է մագնիսական հոսքի քվանտների կոհերենտ շարժումից՝ գերհաղորդիչ թաղանթով տրանսպորտային հոսանքի ազդեցության տակ:

Իր բեղմնավոր գիտական աշխատանքին զուգընթաց Ռ. Մարտիրոսյանը 1965 թվականից նաև դասավանդել է Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ)՝ վարելով ռադիոֆիզիկայի ընդհանուր և մասնագիտացված դասընթացներ: Նրա նախաձեռնությամբ 1983 թ. ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվել է գերբարձր հաճախականության ռադիոֆիզիկայի ամբիոնը, որը նա ղեկավարել է մինչև 1986 թվականը: 1994 թ. ՀՀ կառավարության որոշմամբ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշանակվել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր և մեծ ներդրում ունեցել ԵՊՀ կրթական համակարգի բարելավման գործում: Նրա ղեկավարությամբ իրականացվել են կրթության և գիտական հետազոտությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման մի շարք ծրագրեր: Ռ. Մարտիրոսյանի ղեկավարության շրջանում համալսարանում բացվել են մի շարք նոր ֆակուլտետներ և ամբիոններ, ուսանողների թիվը կրկնապատկվել է: Արտասահմանյան մի շարք համալսարանների հետ կնքված պայմանագրերի շնորհիվ ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավվել է միջազգային գիտական և կրթական ծրագրերում:

2006 թ. Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ, որը նա ղեկավարել է շուրջ 15 տարի: Այդ տարիներին նոր ուժով բացահայտվեցին գիտության հմուտ կազմակերպչի նրա անուրանալի տաղանդն ու բեղմնավոր գործունեությունը: ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում Ռ. Մարտիրոսյանը նախաձեռնել և ստեղծել է գիտական կազմակերպությունների բովանդակային միավորումներ՝ գիտական կենտրոններ, իրականացրել է ԳԱԱ համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունն ապահովող կառուցվածքային բարեփոխումներ: Նրա անմիջական ղեկավարությամբ ընդլայնվել է ԳԱԱ միջազգային գիտական համագործակցությունը: 2016 թ. Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է ՌԴ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: 2021 թ. Ռ. Մարտիրոսյանը նշանակվել է ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդակց և «ՀՀ ԳԱԱ Չեկույցներ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիր: Գիտության ու կրթության երախտավորը վախճանվել է 2025 թ. մայիսի 5-ին:

Ռադիկ Մարտիրոսյանի գիտական, մանկավարժական և գիտակազմակերպչական գործունեությունը գնահատվել է «Պատվո նշան», «Ժողովուրդների բարեկամության», «Հոկտեմբերյան հեղափոխության», «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշաններով և հայրենական ու օտարերկրյա բազմաթիվ այլ պարգևներով:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն**  
**Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք**  
**Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ**

## Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին նվիրված արժեքավոր աշխատություն



Ցավոք, վաստակաշատ գիտնականի վերահաս վախճանը հնարավորություն չտվեց ժամանակին անդրադառնալու այս գրքին: Ռ. Մարտիրոսյանի 90-ամյա հոբելյանը պատեհ առիթ է՝ լրացնելու այդ բացթողումը: Հավելենք սփոփիչ մի հանգամանք ևս. մեծանուն գիտնականը հասցրեց տեսնել իրեն նվիրված գրքի ազդորինակը:

Շնորհակալ գործ է կատարել «ԼԴՀ Մատաղիսի» ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի անվան դպրոցի աջակցման», հասարակական կազմակերպության նախագահ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանյա Բարսեղյանը, ում նախաձեռնությամբ և անմիջական ջանքերի շնորհիվ հրատարակության է պատրաստվել վաստակաշատ գիտնականի նվիրված նման արժեքավոր գիրքը: Իսկ դրանում ընդգրկված փաստառատ նյութերի ուսումնասիրությունը և շարադրանքը սիրով ստանձնել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովիվ Մուսայելյանը:

Գրքի ծավալումն առաջաբանում Վ.

Բարսեղյանին հաջողվել է խտացված գույներով և հստակ շեշտադրումներով վեր հանել Ռ. Մարտիրոսյանի՝ մարդու, քաղաքացու, գիտնականի և կազմակերպչի ամբողջական նկարագիրը: Ուշագրավ է գրքի կառուցվածքը. այն բաղկացած է հինգ գլուխներից, որոնցում հաջորդաբար շարադրվում են արձանի գիտնականի կյանքի կարևորագույն հանգրվանները:

Գրքի առաջին գլուխը նվիրված է գիտնականի ուսումնառության տարիներին և գիտության մեջ նրա առաջին քայլերին: Երկրորդ գլխում մանրամասն ներկայացված է Ռ. Մարտիրոսյանի երկարամյա բուռն ու արդյունավետ գիտական և կազմակերպչական աշխատանքը Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: Գրքի երրորդ գլուխը նվիրված է նրա բեղմնավոր գիտակրթական և կազմակերպչական առաքելությանը Երևանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում: Փաստառատ նյութերով չորրորդ գլխում լուսաբանվում է այն հսկայածավալ գիտակազմակերպչական գոր-

ծունեությունը, որն ակադեմիկոսն իրականացրել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի պաշտոնում: Գրքի վերջին գլխում ամփոփված են ժամանակակիցների գնահատանքի ու երախտագիտության ջերմ խոսքեր Ռ. Մարտիրոսյանի մասին: Հատկանշական է, որ ակադեմիկոսի բոլոր գործընկերները, կարծես նախապես պայմանավորված, գրեթե նույն որակումներով են բնութագրում նրա կերպարի ընդհանրական նկարագիրը. խարիզմատիկ, սկզբունքային, դիմացիման մինչև վերջ լսող, հարաբերություններ ստեղծելու և դրանք պահպանելու մեծ ունակությունների տեր, մինչև վերջ նվիրված իր գործին, լավ ընկեր, հուսալի բարեկամ, հայրենասեր ու պետականամետ գործիչ:

Ընթերցող լայն հանրությանը հասցեագրված անչափ շահեկան այս գիրքը հագեցած է բազմաթիվ լուսանկարներով, որոնք, անշուշտ, առավել արժեքավոր են դարձնում այս աշխատությունը:

«Գիտություն» թերթի խմբագրություն

2025 թ. «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը լույս է ընծայել «Գիտության և կրթության նվիրյալը» ուշագրավ գիրքը (396 էջ + 56 էջ ներդիր), որում ամփոփված հարուստ նյութերը լավագույնս վեր են հանում մեծանուն գիտնական, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի բովանդակալից կյանքն ու արգասաբեր գործունեությունը:



Լրացավ հայ նշանավոր փիլիսոփա, 33 ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգ Աբելի Բրուտյանի ծննդյան 100-

# Մեր երախտավորները. Գեորգ Բրուտյան - 100

ամյակը: Ծանրակշիռ է մեծանուն գիտնականի ներդրումը փիլիսոփայության, տրամաբանության, հայ փիլիսոփայական մտքի հիմնահարցերի և հայագիտության մեթոդաբանական սկզբունքների մշակման բնագավառներում:

Գ. Բրուտյանը ծնվել է 1926 թ. մարտի 24-ին ՀԽՍՀ Իջևանի շրջանի Սևքար գյուղում: 1947թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, իսկ 1950 թ.՝ Երևանի պետական համալսարանը: 1951-1962 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում: 1962-70 թթ. եղել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության, իսկ 1970-1986 թթ.՝ ԵՊՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնների վարիչ:

1962 թ. Գ. Բրուտյանին շնորհվել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1971 թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ իսկական անդամ:

1977-1994 թթ. Գ. Բրուտյանն աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և բանասիրության, ապա՝ հումանիտար գիտությունների (1994-95 թթ., 1998-2002 թթ.) բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: Նույն ժամանակահատվածում զբաղեցրել է նաև ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտի պաշտոնը:

Անվանի գիտնականը 1987-2015 թթ. եղել է Հայոց փիլիսոփայության ակադեմիայի, իսկ 2001-2015 թթ.՝ Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պրեզիդենտը: Անդամակցել է Բանասիրության համաշխարհային (Անգլիա), «Արարատ» միջազգային (Փարիզ), Լոնդոնի դիվանագիտական, Միջազգային դիվանագիտական ակադեմիաներին:

2002-2015 թթ. Գ. Բրուտյանն աշխատել է որպես ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդակցական Կաստակաշատ գիտնականը վախճանվել է 2015 թ. դեկտեմբերի 8-ին: Նրա հիմնական աշխատությունները

վերաբերում են փիլիսոփայության և տրամաբանության հիմնախնդիրներին: Գ. Բրուտյանը հիմնադրել է Երևանյան փաստարկման դպրոցը, ստեղծել փոխակերպման տրամաբանության գիտությունը, առաջադրել լեզվաբանական լրացուցչության սկզբունքը (կոչվում է իր անունով), մշակել թարգմանության, մետահայագիտության տեսությունները: Հեղինակ է տրամաբանության բուհական և դպրոցական դասագրքերի, տասնյակ մենագրությունների ու հարյուրավոր գիտական հոդվածների: Նրա աշխատությունները թարգմանվել են աշխարհի շուրջ քսան լեզուներով:

Գիտական բեղմնավոր գործունեության համար Գ. Բրուտյանը պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով և օտարերկրյա մի շարք համալսարանների ոսկե մեդալով:

«Գիտություն» թերթի խմբագրություն

## ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը և «Հաղթանակի արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսը

2026 թ. մայիսի 4-6-ը Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտում (Սանկտ Պետերբուրգ) անցկացվեց Հայրենական մեծ պատերազմում տարած Հաղթանակի 81-ամյակին նվիրված «Հաղթանակի արվեստը» միջոցառումների շարքը: Ծրագրի ղեկավարն էր Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության թեկնածու, «Ձուբովյան ինստիտուտի տարեգիրք» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր Դմիտրի Շուսիլինը:

Ծրագրի կենտրոնական իրադարձությունը դարձավ «Հաղթանակի արվեստը» երկօրյա միջազգային գիտական կոնֆերանսը, որն անցկացվեց «Գիտության և տեխնոլոգիաների տասնամյակի» շրջանակներում մայիսի 4-6-ը և համախմբեց Ռուսաստանի ու Հայաստանի արվեստաբաններին, երաժշտագետներին, մշակութաբաններին, պատմաբաններին և փիլիսոփաներին:

Դմիտրի Շուսիլինի հրավերով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանն ընդգրկվեց կոնֆերանսի կազմակերպության մեջ: Ութ վաստակաշատ գիտնականներից բաղկացած կազմակերպումն առաջնությունը միակ ներկայացուցիչն էր:

Հեռավար ձևաչափով կոնֆերանսին զեկուցումներով մասնակցեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատմիկությունը: Մեր արվեստաբանները՝ արվեստագիտության դոկտոր Ա. Ասատրյանը, արվեստագիտության թեկնածուներ Մ. Քամալյանը, Մ. Տիգրանյանը, Գ. Պողոսյանը, ճարտարապետության թեկնածու Ա. Տեր-Մինասյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Սարյանը, ներկայացրին բովանդակալից զեկույցներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի իրադարձությունների արտացոլմանը Հայաստանի ակադեմիկոսների, ճարտարապետների, կոմպոզիտորների ստեղծագործություններում և հայ ժողովրդական երաժշտության մեջ:

Աննա Ասատրյանի «Մեծ հաղթանակի նախակարգերը. Արամ Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիան» զեկույցն անպատակ էր բացահայտել Արամ Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայի հայեցակարգը (կոնցեպտը) և վերլուծել կոմպոզիտորի սիմֆոնիզմը՝ Մեծ հաղթանակի կանխագագանակ պրիզմայով: «Մեր կարծիքով, Հայրենական մեծ պատերազմի թե՛ պահին՝ 1943 թվականին գրված երկրորդ սիմֆոնիան Արամ Խաչատրյանն ավարտել է լավատեսական ֆինալով, քանի որ, լինելով իր ժամանակից առաջ անցած մեծ արվեստագետ, նա կանխատեսել է ապագան»:

Մարիաննա Տիգրանյանը «խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի կերպարը հայ ժողովրդական երաժշտության մեջ» զեկույցն անց մեջ, որ Նելսոն Ստեփանյանի, ինչպես և Թամանյան դիվիզիայի մարտիկների, Հաղթանակի մարշալների և հայ ժողովրդի մյուս քաջորդիների իշխանական անմահացել է հերոսների սխարանքները գովերգող ժողովրդական երգերում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովրդական երգարվեստը

դարձավ հայրենասիրության և մարտական ոգու բարձրացման հզոր գեղարվեստական Ստեփանյանի սխարանքներն անմիջապես արձագանք գտան ժողովրդական ստեղծագործության մեջ՝ հարստացնելով հայկական հերոսական-գինավորական երգերի պատմությունը:

Անուշ Տեր-Մինասյանը «Երևանի ճարտարապետությունը հետպատերազմյան շրջանում (1945-1960 թթ.)» զեկույցն անց մեջ, որ հնագույն պատմական քաղաք Երևանի ճարտարապետությունը, որը հիմնականում ձևավորվել էր 1920-30-ական թվականներին, մեծ փոփոխությունների ենթարկվեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակից հետո: Այդ ժամանակաշրջանում ի հայտ եկան քաղաքաշինական նոր լուծումներ և կառույցներ, որոնք կարևորագույն դեր ունեցան քաղաքի հետագա զարգացման գործում: Այն ժամանակ կառուցված բազմաթիվ շենքեր մտան ժամանակակից հայկական ճարտարապետության գանձարանը: Դրանցից էին Կառավարական N 2 տունը, ՀՀ ԳԱԱ նախագահության շենքը, Փակ շուկայի, Ազգային ժողովի, Մատենադարանի և բազմաթիվ այլ շենքեր, որոնք այժմ ստեղծում են Երևան քաղաքի յուրահատուկ, ինքնատիպ տեսքն ու կերպարը:

Մարգարիտա Քամալյանը «Հայրենական մեծ պատերազմը Հայաստանի ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի աչքերով» զեկույցն անց մեջ, որ Էդուարդ Իսաբեկյանի արվեստում Հայրենական մեծ պատերազմը դառնում է ոչ միայն պատերազմի վավերագրություն, այլև մարդկային ոգու, հերոսության ու ազգային հիշողության արտահայտություն:

Գայանե Պողոսյանի «Հայրենական մեծ պատերազմի թեման նկարիչ Եփրեմ Սավայանի ստեղծագործության մեջ» զեկույցում նվիրված էր գեղանկարիչ Եփրեմ Սավայանի (1909-1974) Հայրենական պատերազմին նվիրված թեմատիկ գեղանկարչական հորինվածքների քննությանը: Ուսումնասիրության առանցքում էին 1941-1945 թթ. ընթացքում վրձնած նրա ստեղծագործությունները՝ «Ռուստովի գրավումը խորհրդային զորքի կողմից»՝ Ղովհաննես Զարդարյանի հետ համատեղ վրձնած մեծադիր կտավը, պատերազմում աչքի ընկած զորահրամանատարների (Վորոշիլով, Տիմոշենկո, Բուդյոննի) դիմանկարները և այլն: Գայանե Պողոսյանի դիտարկմանը Եփրեմ Սավայանն իր կտավներում փոխանցել է ժամանակի հերոսական ոգին և մարդկային անկողություն ուժի զգացողությունը:

Ռուզան Սարյանի զեկույցում նվիրված էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի ռազմաճակատային նամակներին:

Ամփոփելով «Հաղթանակի արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները՝ Դ. Շուսիլինը և Ա. Ասատրյանը բարձր գնահատեցին կոնֆերանսի դերը երկու պետությունների արվեստագիտության ու մշակույթի զարգացման գործում և պատրաստակամություն հայտնեցին շարունակելու երկու ինստիտուտների միջև արդյունավետ համագործակցությունը:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ  
Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

## Երիտասարդ գիտնականի ամբիոն Մարիետա Զաքարյան



Երիտասարդ քիմիկոս, ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող, քիմիական գիտությունների թեկնածու Մարիետա Զաքարյանը մասնագիտությամբ նյութագետ է: Ընդամենը 27 տարեկանում Մարիետան արդեն հասցրել է դառնալ շուրջ 30 գիտական աշխատության հեղինակ, որոնց մեծ մասը տպագրվել է միջազգային գիտական ամսագրերում:

«Պետք է փորձել աստիճանաբար «դուրս գալ միջազգային շուկա» և տպագրվել առաջատար ամսագրերում: Ուսանողները պետք է պարտադիր գիտական աշխատանք կատարեն գիտությունների ակադեմիայի ինստիտուտներում և արդյունքը զեկույցն իրենց կրթական հաստատություններում և հնարավորության դեպքում տպագրեն իրենց առաջին հոդվածը՝ համագործակցելով ինստիտուտների գիտնականների հետ»,- կարծիք հայտնեց երիտասարդ գիտնականը: Մարիետան ծնունդով Գյումրիից է: Դպրոցի ավարտությունից հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ, այնուհետև շարունակել մագիստրատուրան Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում, որից հետո էլ ասպիրանտուրան՝ ամօրգանական և ածխաթուրքի քիմիայի ամբիոնում:

«Ուսանող տարիներին նա ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում միացավ գիտական խմբի աշխատանքներին՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Սուրեն Խառատյանի ղեկավարությամբ: Գրեթե 7 տարի այդ ոլորտում են և փորձում են տեղեկանքը պահել, հետ չմնալ: Գիտության մեջ եթե մտաք, պետք է անընդհատ այդ ոլորտի մեջ լինես, եթե կանգնեցիր, շատ հետ կմնաս»,- մեջք քիմիկոսը:

Մարիետան հաճախ է մասնակցում միջազգային գիտաժողովների, համագործակցում արտասահմանցի գործընկերների հետ, նաև ժամանակ առ ժամանակ աշխատում արտերկրում: Նա վերջերս է վերադարձել ԱՄՆ-ի Ինդիանա նահանգի Սաուդ Բենդ քաղաքում գտնվող Նոտր Դամի համալսարանից, որտեղ երեք ամիս աշխատել է Ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային հետազոտությունների լաբորատորիայում:

«Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը համագործակցում է այդ համալսարանի հետ, համատեղ հոդվածներ ենք գրում, աշխատանքներ ենք անում, այնտեղ նաև աշխատող հայ գիտնականներ ունենք: Մեր ինստիտուտը նաև համագործակցում է Ֆրանսիայի, Կորեայի, Իսպանիայի, Ռուսաստանի գիտական կենտրոնների հետ: Ավտիվ համագործակցում ենք նաև Էստոնիայի Տեխնոլոգիական ինստիտուտի հետ: Արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտական հոդվածներ ենք տպագրում, նոր հետազոտություններ անցկացնում»,- պատմեց Մարիետա Զաքարյանը:

Նա մեջք, որ համապատասխան լծակներ ունենալու դեպքում Հայաստանում առաջինը կվերափոխեր կրթական համակարգը, կվերապատրաստեր դասախոսներին, կբարձրացներ ուսանողների կրթաթոշակը և կստեղծեր նոր, մոտիվացնող մրցանակներ կրթական համակարգում և, իհարկե, կբարձրացներ գիտնականների աշխատավարձը:

Մարիետա Զաքարյանի կարծիքով Հայաստանում գիտությունը կարող է հետաքրքիր դառնալ նաև ներդրումների համար: Ներդրողին պետք է նախնական արդյունքներ ցույց տալ, օրինակ՝ մինի-արտադրական պրոցեսներ, փոքր կիրառական արդյունքներ, որոնց հիման վրա ներդրումները կշատանան:

«Ինձ համար իդեալական կլինի, որ ես ապրեմ, աշխատեմ Հայաստանում, բայց նաև հնարավորություն ունենամ ժամանակ առ ժամանակ արտերկրում աշխատելու՝ միջազգային տեղեկանքներին հետևելու և իմ ստացած փորձն ու գիտելիքներն իմ երկրում կիրառելու համար: Իմ ամենամեծ երազանքներից մեկն իմ աշխատանքով իմ երկրում ինչ-որ բան փոխելն է»,- ասաց երիտասարդ գիտնականը:

Մոնիկա ԵՐԻՅԱՆ

Չարենցը և պատմությունը



ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԵՂԻՉԵ ՉԱՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՂԵՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ-2026

ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը «Համազգային հայ կրթական և մշակութային միության» հովանավորությամբ լույս է ընծայել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի գրական-քաղաքական աղբյուրները» խորագրով մենագրությունը (692 էջ): Այն տպագրության է երաշխավորել ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը: Գիրքը միանգամայն նոր խոսք է չարենցագիտության մեջ՝ հիմնված փաստական հարուստ նյութի վրա, որ հեղինակը հայթայթել է տասնամյակների ընթացքում: Խորությամբ և լայն ընդգրկումով բացահայտվում են Չարենցի գրական-քաղաքական աղբյուրները, այսինքն՝

ժամանակը և ժամանակակիցները՝ կամավորական շարժում, Հայաստանի Առաջին հանրապետություն, ՀԽՍՀ, քաղաքական ու գրական դեմքեր, որպես գրող և գրական գործիչ՝ երկիր ու պետություն կառուցելու ջանք, որ ինքնին արդեն իսկ նրա կյանքն ու ստեղծագործական ուղին է: Նրա այդ ճանապարհի հենակետերն են՝ հայրենիք, հեղափոխական ոգևորություն, հիասթափություն, իր դեմ ուղղված անվտանգություն և գրական ու քաղաքական հալածանքներ:

Դավիթ Գասպարյանը գրականության պատմաբան է: Առանց պատմական ժամանակի համակողմանի իմացության գրականության պատմություն չի լինի: Պատմականությունն առկա է նրա ոչ միայն հատկապես այդ բնույթի աշխատություններում, ինչպես «Հայ իրն և միջնադարյան գրականության պատմություն» (2009), «Հայ սովետական պոեզիայի պատմություն» (1987), ոչ միայն առանձին հեղինակների նվիրված մենագրություններում, ինչպես «Ակսել Բակունց» (2009), «Գուրգեն Մահարի» (2013), «Համո Սահյան» (2003, 2024) «Պարույր Սևակ» (2001, 2025), այլև գիտական և գիտահանրամատչելի հոդվածներում: Պատմականությամբ են տոգորված նաև նրա վերլուծությունների պատմահամեմատական, պատմակենսագրական, համակարգային-համադրական մեթոդները:

Պատմականությունը Դավիթ Գասպարյանի չարենցագիտության հիմքն է: Գրքի վերջում տրված է նրա համապատասխան հրատարակությունների մատենագիտությունը, որն ընդգրկում է 53 վերնագիր՝ մենագրություններ, հետազոտություններ, ամսփյա ժառանգություն, հուշագրություն, «Երկերի ժողովածու»-ներ: Եվ սա դեռ ամբողջը չէ, որովհետև պատրաստվում ու տպագրության են սպասում նոր գրքեր, այդ թվում՝ «Եղիշե Չարենց» համադրականը:

Դավիթ Գասպարյանը գրականագետ է լայն ընդգրկումով. ոչ միայն գրականության պատմաբան է, այլև տեսաբան, աղբյուրագետ, գրական քննադատ: Բոլոր այս հատկանիշների լավագույն խտացումն առանձնապես Չարենցին նվիրված վերջին գրքերն են՝ «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» (2022), «Չարենց» (2023) և ահա այս նոր մենագրությունը, որում շարունակում ու լրացնում են իրար:

Գիրքն ունի «Մուտքի խոսք», 21 գլուխ, «Վերջաբան», «Հավելվածներ», «Օգտագործված գրականություն» բաժինները և այլ օժանդակ ցանկեր: Առանցքային են երկու քաղաքական ուժերի՝ Հայ հեղափոխական դաշնակցության և Հայաստանի կոմունիստական կուսակցության առկայությունն ու պայքարը և Չարենցի կյանքի ու ստեղծագործության ուղին այդ ուժերի հետ ունեցած գաղափարական և անձնական հարաբերությունների միջով:

Չարենցը 1915-ին կամավորագրվեց ու զենքը ձեռքին մեկնեց ճակատ: 1917-ին նա մասնակցեց Երզրումի կռիվներին: Իր պոեմներով ու բանաստեղծություններով ողջունեց հայոց պետականության ծնունդը: «Երկիր Նաիրի» վեպով ներկայացրեց Կարսի ամոթալի անկումը, բայց նաև տեր կանգնեց հույների վերջին հանգրվանին, որ Առաջին համաշխարհային պատերազմի փոխարինման երկրորդ հանրապետությունն էր:

1919 թվականին Չարենցը հանրահռչակվեց կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի կողմից, ներկայացավ նրան, պաշտոն ստացավ: Նույն պաշտոնը շարունակեց խորհրդային Հայաստանի տարիներին: Այնուհետև նրա կյանքը կապված էր խորհրդային իրականության հետ՝ գրական-կազմակերպական բուն գործունեություն, հրատարակչական արդյունավետ աշխատանք:

«Գիրք ճանապարհի» ժողովածուի տպագրությունից հետո Չարենցն արդեն քաղաքականապես անբարեխոյս անուն էր վարչակարգի համար:

Ահա կյանքի այս ուղեգծերի մեջ բացահայտված են Չարենցի առնչությունները հայ գրական-քաղաքական հեղինակությունների հետ՝ Գ. Թումանյան, Ն. Աղբալյան, Ա. Ահարոնյան, Ա. Չոպանյան, Սիմոնյան, Դ. Վարուժան, Վ. Տերյան, Ա. Տիգրանյան, Վ. Ահարոնյան, Ա. Իսահակյան, Գ. Օշական, Կ. Ջալալյան, Կ. Նավասարդյան, Ա. Բակունց, Ե. Քոչար, Ման. Ա. Մյասնիկյան, Ա. Խանջյան... Այստեղ են Չարենցի կյանքի ժամանակը, այսինքն՝ 1910-1930-ական թթ. ներկայացնող բազմաթիվ այլ անուններ ևս:

Չարենցը շարունակական զարգացման, ներքին վերակառուցումների բանաստեղծ էր: 1927-ից՝ Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակից հետո, նա ապրեց խոր հիասթափության շրջան, որն արտահայտվեց «Գիրք ճանապարհի» մատյանում և անսփայնեց: Նացիոնալիստական մեղադրանքների ու հալածանքների ներքո խորացավ ազգայինը, ինչն էլ նրան հասցրեց ՀՀԴ-ի դերի ու նշանակության վերանայման: Նաև ժամանակի պարտադրած անհավատությունից, քանդվող եկեղեցիների ավերակների ու տորոպոլ խաչերի կողքին կյանքի վերջին տարիներին օդանցք բացեց դեպի Աստված ու գրեց իր «Լեռան աղոթքներ»-ը... Այսպես, Դ. Գասպարյանը ցույց է տալիս, թե ինչպես «Ստեղծագործ ոգու աստիճանական վերամարմնավորման ճանապարհին բանաստեղծը քայլ առ քայլ հասավ բարձրագույն աստիճանին»:

Դավիթ Գասպարյանի գիրքը հարուստ ընդգրկում ունի, և ինչպես նախորդները, նոր խթան կարող է հաղորդել Չարենցի ժառանգությանը և 1910-1930-ական թթ. գրական-մշակութային կյանքի պատմությանը հետաքրքրվողներին:

Ամատունի ՎԻՂԱՅԱՆ Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արցախում ոչնչացվող եկեղեցիները միջազգային զեկույցների և Բաքվի «հանդուրժողականության» միջև



ԱՄՆ-ի Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովը վերջերս հրապարակել է Ադրբեյջանի վերաբերյալ 2025 թվականի թարմացված զեկույցը: Ի թիվս այլ խնդիրների՝ նշվում է, որ Լեռնային Ղարաբաղում և հարակից տարածքներում պատմական հայկական կրոնական վայրերը շարունակում են վտանգի տակ մնալ. 2025 թ. հուլիսին արբանյակային լուսանկարների միջոցով արձանագրվել է առնվազն 8 ավերված և 10 վնասված կրոնական օբյեկտ:

Չարենցի հրապարակումից օրեր անց հայտնի դարձան վանդալիզմի մի քանի դեպքեր ևս: Արբանյակային լուսանկարներով հաստատվեց, որ Ստեփանակերտում հիմնահատակ ավերվել են Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարն ու Սուրբ Հակոբ եկեղեցին, իսկ շատ եկեղեցիների ճակատագրեր դեռևս անհայտ են մնում:

Չարենցը արձանագրում է նաև ավելի քան երկու տասնյակ քրիստոնյա հայ բանտարկյալների նկատմամբ ճնշումները: Առանց պատշաճ իրավական պաշտպանություն ապահովելու՝ նրանց դատել են, ծեծել, հոգեբանական բռնության ենթարկել, չեն տրամադրել անհրաժեշտ դեղամիջոցներ և նորմալ սնունդ, թույլ չեն տվել իրենց մոտ պահել «Աստվածաշունչ», «այրելով» ջնջել են մարմնին դաջված խաչերը:

Կրոնական հիմքով ճնշումների շարքում զեկույցում նշվում են նաև շիա կրոնական գործիչների նկատմամբ

բռնությունն ու նրանց՝ սարսփելի պայմաններում պահելը: Չարենցը նաև արձանագրել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ հետապնդումներ:

Բնականաբար, ցանկացած զեկույց, հայտարարություն, որն անգամ չնչին քննադատություն է պարունակում կամ խնդիր արձանագրում, Բաքվում որակվում է որպես կողմնակալ և սադրիչ:


Չարենցի արձագանքել է Կովկասի մուսուլմանների վարչությունը (ԿՄՎ): Ըստ ԿՄՎ-ի՝ այդ գնահատականները չեն արտացոլում «երկրի ներսում և զրբալ մակարդակում կրոնական հանդուրժողականությունը ջատագովելու Ադրբեյջանի ջանքերը»: Ապրիլի 27-ին ԿՄՎ-ը ևս մեկ հայտարարություն է տարածել՝ արդարացնելով եկեղեցին քանդելու քաղաքականությունը: Ըստ այդ վարչության տրամաբանության՝ եկեղեցիներն «օկուպացիայի» խորհրդանիշեր են, հետևաբար՝ դրանց քանդումը չի կարող համարվել կրոնական ու մշակութային ժառանգության ոչնչացում:

Ինչպես տեսնում ենք, զեկույցի գնահատականներն ու «Բաքվի հանդուրժողականության» քարոզչությունը հակասում են միմյանց: Խնդիրն այն է, թե ինչպես կարող է «հանդուրժողականություն» բառն իր մեջ ներառել երևույթներ, ինչպիսիք են՝ հուշարձանների ավերումը, դրանց ձևախեղումն ու յուրացումը, հայկականության բացարձակ ժխտումը: Ընդ որում այս ամենն արվում է բացահայտ և առանց որևէ կաշկանդվածության, իսկ հռչակված հանդուրժողականությունն առաջին հերթին արտաքին լսարանի համար երկրի փաթեթավորման մաս է:

Հանդուրժողականություն բառն ունի շատ հստակ բացատրություն՝ համակրանք կամ հարգալից վերաբերմունք ուրիշների՝ սեփականից տարբերվող կամ հակասող համոզումների կամ գործելակերպի նկատմամբ: Հանդուրժողականություն՝ ադրբեյջաներեն «tolerantlıq»-ը զուտ բառ չէ, այն երևույթ է, հասկացություն, որը կամ կա, կամ չկա: Ինչպես Միջազգային կրոնական ազատության հարցերով հանձնաժողովն է կարծում, այս առումով Ադրբեյջանին հատուկ դիտարկման ցանկում պահելու անհրաժեշտություն կա:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ 06.05.2026

Մտքեր, որոնք խորհելու տեղիք են տալիս



Սոս Սարգսյան Արատավոր ենք մենք...

... Գ ի տ ե ն ք խղճի հետ գործարքներ անել: Անկիրթ՝ սակայն ուսուցանել գիտենք: Անձեռնհաս բայց դեկավար: Վերևին՝ քծնել, ներքին՝ ստորացնել:

Չեռքը մեր կաշառք տալու-առնելու է սովոր, մեր աչքը՝ գողության, մենք սուտ արտադրող ենք, ու լեզուն մեր՝ անամոթ: Մեքը մեր՝ անբանության սովոր: Ստրկացնել հոգիներ և արբենալ իշխանությունից անսահմանափակ: Տիրել՝ ինչ շարժվում է, ինչ անշարժ է, ինչ ծնվել է, ինչ ծնվելու է:

Մարդու կյանքն արժեք չունի մեզ համար, հոգին առավել: Հանուն գաղափարի զոհաբերել գիտենք և զոհերին չհաշվել:

Մեր ճանապարհից շնորհալիներին հեռացնելու վարպետ ենք, դիակների վրայով բարձրանալու՝ սովոր: Մարդ չես, եթե մեր ոհմակից չես, և արժեք չունես:

Մենք ձև ենք և ոչ բովանդակություն: Մենք խոսք ենք և ոչ թե գործ: Ժողովրդին ակնթել գիտենք ու դարձնել ամբոխ:

Տերերից վախենում ենք, հիստերիկ ցավազարությանը ծափահարում: Նախարարն բառաչներով ողջունել ենք առաջնորդներին ու նսեմացրել մեր մարդ էությունը:

Այն՝ ինչ տեսել ենք, այն՝ ինչ սովորել ենք...

Մոռացված հայ գիտնականներ

Նշանավոր գյուտարարի հայտնագործությունը. Սիմոն Կիրյան



1930-ականների սկզբին մի օր Ստալինի աշխատասենյակի գրասեղանին դրվեց մի նամակ, որի վրա կարմիր գիծ էր քաշված: Դա նշանակում էր, որ նամակը հույժ կարևոր էր: Այն Կրասնոդարից Կրեմլ էր ուղարկել մի քաղաքացի: Նա պնդում էր, որ սովորական շաքարից պինդ ադամանդ է ստացել և նամակի հետ ուղարկել էր նաև դրա օրինակը: Եվ իսկապես, ադամանդն այնքան պինդ էր, որ երբ այն փորձարկեցին սեղանին դրված ապակու վրա, վերջինս հեշտությամբ երկու մասի բաժանվեց: Ստալինի հրամանով երեք օր անց Կրասնոդար քաղաքի Կիրովի անվան փողոցի շենքերից մեկի բակում կանգնեց ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատին պատկանող օպերատիվ համարանիշով մի մեքենա: Ինչպես սպասելի էր, նամակը Կրեմլ ուղարկած քաղաքացուց առգրավեցին բոլոր ադամանդներն ու դրանց մշակմանն առնչվող զծագրերը, իսկ Կրասնոդարի բնակիչ Սիմոն Կիրյանն այդ օրից հայտնվեց ՊԱԿ-ի վերահսկողության տակ:

Ֆիզիոթերապևտ, հետազոտող, ՌԽՖՍՀ վաստակավոր գյուտարար Սիմոն Կիրյանը ծնվել է 1898 թ. փետրվարի 20-ին Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) Եվա Նազարյանի և Դավիթ Կիրյանի բազմազավակ ընտանիքում:

Մանկության տարիներին տղան հետաքրքրություն էր դրսևորում երաժշտության, լուսանկարչության և էլեկտրամեքենաշինության նկատմամբ: Տղան երազում էր հայտնի դաշնակահար դառնալ, սակայն ծայրահեղ աղքատության պատճառով վաղ տարիքից ստիպված էր աշխատել որպես գործակատար, բեմեր զարդարող, դաշնամուր լարող, ջրմուղագործ: Այդ պատճառով նա հասցրեց ընդամենը չորրորդ դասարանի կրթություն ստանալ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տասնիննամյա Սիմոնն աշխատանք գտավ Կուբանի գործարաններից մեկում որպես շարքային էլեկտրագործ, և հենց այդ պահից սկսած՝ էլեկտրամեխանիկան դարձավ նրա տարերքը:

1923 թ. Կիրյանը ծանոթացավ մանկավարժ և լրագրող Վալենտինա Լոտոցկայայի հետ: Նրանք ամուսնացան, և Վալենտինան դարձավ Սիմոնի հավատարիմ օգնականն ու ընկերը: Չնայած կենցաղային վատ պայմաններին, սոցիալական ծանր վիճակին և ՊԱԿ-ի վերահսկողության տակ գտնվելուն՝ Կիրյան ամուսիններն աշխատում էին և ստեղծագործում իրենց փոքրիկ սենյակում:

Եկատերինոդարի քաղաքային տպագրատունն օգտվում էր հայ գիտնականի ստեղծած էլեկտրավառարանից, որը տպատառեր էր ձուլում: Կիրյանը ստեղծեց նար ալրաղաց՝ ցորենի մաքրման

համար նախատեսված հատուկ մագնիսական հարմարանքով: Այն տարիների և ժամանակաշրջանի համար մեծ իրադարձություն էր նաև պահածոների արդյունաբերության մեջ մթերքի ջերմային մշակման համար նախատեսված մեքենաների ստեղծումը, որոնց հեղինակն էին Սիմոն և Վալենտինա Կիրյանները: Հայրենական պատերազմից շատ առաջ Կիրյանը ջրացնցողային բաղնիքների համար էլեկտրակիրանային համակարգ էր ստեղծել, որը նախատեսված էր թունավոր գազերից ախտահարված մարդկանց մարմինները թույններից լվանալու համար:

1939 թ. ադամանդ ստեղծելուց և ՊԱԿ-ի ուշադրության կենտրոնում հայտնվելուց հետո Սիմոն Կիրյանն աշխատանքի ընդունվեց քաղաքային հիվանդանոցում՝ որպես էլեկտրասարքավորումների վերանորոգման մասնագետ: Բարձր հաճախականության հոսանքով աշխատող սարքավորումը վերանորոգելիս նա էլեկտրոդների միջև առկայծող տարօրինակ վարդագույն ճառագայթում նկատեց և որոշեց այն ֆիքսել ֆոտոժապավենի վրա՝ բարձր հաճախականության հոսանքի դաշտում: Առաջին առարկան, որի լուսանկարը գիտնականը ստացավ այդ մեթոդով, հասարակ մետաղադրամ էր: Նա սկսեց բարձր լարման դաշտի մեջ տարբեր առարկաներ տեղադրել՝ արդեն առանց ֆոտոխցիկի լուսանկարելով անսովոր ճառագայթումը: Հիմնվելով սեփական հետազոտությունների վրա՝ Սիմոն Կիրյանը գտավ մի հետաքրքիր օրինաչափություն. բարձր հաճախականության հոսանքի դաշտում տեղադրված ցանկացած առարկա լուսարձակում է ֆոտոժապավենի վրա: Լուսարձակման բնույթը կախված է լուսանկարվող առարկայի վիճակից: Օրինակ, երբ ծառի տերևը նոր է պոկված, այն այլ լուսարձակում ունի: Երբ պոկվելուց անցել է մեկ ժամ կամ մեկ օր, դրա լուսարձակումը փոխվում է: Եակամորեն տարբերվում են մոխ առողջ, հիվանդ կամ մույնիսկ պարզապես հոգնած մարդու ձեռքերի լուսարձակումները:

Այսպես, Սիմոնն ու Վալենտինան միասին մշակեցին ու ստացան զգալի նպաստներ միջոցով տարաբնույթ օբյեկտների լուսանկարահանման եղանակը, որն այսօր նոր տեսակի լուսանկարչության հիմք է դարձել: Կիրյանների հայտնագործությունը կոչվեց կիրյանոգրաֆիա: Այժմ այն հայտնի է նաև «Կիրյանի էֆեկտ» անունով: Կիրյան ամուսինների հայտնագործությունները պաշտպանվեցին քսանմեկ հեղինակային վկայականներով: Նրանք տարբեր երկրներից այդ երկրների լաբորատորիաներ և ինստիտուտներ այցելելու բազմաթիվ հրավերներ ստացան, սակայն ՊԱԿ-ի սահմանած արգելքների պատճառով ստիպված էին սահմանափակվել միայն գործնական նամակագրություններով: Պետական կառույցներից չունենալով որևէ աջակցություն և իրենց հետազոտությունների համար չստանալով անգամ մեկ լուծում՝ ամուսիններն աշխատում էին սեփական միջոցներով: Չնայած այն մեծ ժառանգությանը, որ Սիմոնն ու Վալենտինան թողեցին իրենցից հետո, նրանք ապրեցին չքավորության մեջ...

1971 թ. ծանր հիվանդության պատճառով մահացավ Սիմոնի հավատարիմ ընկերը՝ Վալենտինան: Հանճարեղ հայ գիտնականն առանց կնոջ երկար չապրեց՝ նա իր մահկանացուն կնքեց 1978 թ. օգոստոսի 1-ին:

Կիրյանոգրաֆիան այսօր ամբողջ աշխարհում օգտագործում են բժշկության մեջ՝ տասնյակ հիվանդություններ ախտորոշելու և դրանց զարգացումը վաղ շրջանում կանխելու նպատակով:

Լույսի ինքնակիզակետման երևույթի հայտնագործողը. Գուրգեն Ասկարյան



«Երիտասարդ, ինչ խոսք, ձեր մտահղացումը տպավորիչ է, բայց մենք կարծում ենք, որ այն քչերին կհետաքրքրի»... Սա էր ռուս հայտնի ֆիզիկոսների արձագանքը Մոսկվայի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում սովորող Գուրգեն Ասկարյանի ներկայացրած գյուտին... Բայց որքան էին նրանք սխալվում... Հենց այդ գյուտի հիման վրա տարիներ անց ամերիկացի ֆիզիկոս Դոնալդ Արթուր Գլեզերը ստեղծելու էր համարահայտ «պղպջակային խցիկ» սարքը և 1960 թ. արժանանալու էր Նոբելյան մրցանակի:

1928 թ. դեկտեմբերին Մոսկվայում արցախցի բժիշկներ Աշոտ և Աստղիկ Ասկարյանների ընտանիքում, ծնվեց Գուրգենը: Ծնողների երազանքն էր, որ իրենց որդին երաժիշտ դառնար, սակայն ճակատագիրն այլ ուղի էր սահմանել Գուրգենի համար:

1946 թ. դպրոցը ոսկե մեդալով ավարտելուց հետո, Գուրգենն ընդունվում է Մոսկվայի համալսարան: Նա սովորում է ռադիոֆիզիկայի ֆակուլտետում, որը գլխավորում էր հայտնի ռադիոֆիզիկոս Սամսոն Գվոզդովերը: Կարճ ժամանակ անց, տեսնելով տղայի ընդունակությունները, Գվոզդովերը երիտասարդին խնդրում է մնալ իր ֆակուլտետում՝ խոստանալով վերաբերվել նրան հարազատ հոր պես: Սակայն Գուրգենն ի սկզբանե գերված էր միջուկային ֆիզիկայով: Նա փոխում է ֆակուլտետը և, հմտանալով միջուկային ֆիզիկայի ոլորտում, դառնում է Ռուսաստանի լավագույն ֆիզիկոսներից մեկը: Այս երիտասարդ գիտնականը ստեղծում է կիրառության մեջ է դնում ֆիզիկայում բոլորովին նոր և մինչ այդ անհայտ ուղղություն՝ ճառագայթային ակուստիկան: Միջուկային ֆիզիկայի բնագավառում մասնագիտանալով՝ նա ավարտում է նաև Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտին կից բարձրագույն դպրոցը: 1953 թ. Գուրգենը տեղափոխվում է Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտ, որտեղ էլ 1957 թ. նրան շնորհվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գուրգեն Ասկարյանը հայտնաբերում է մանրամասնորեն հետազոտում է բազմաթիվ երևույթներ, այդ թվում՝ բարձրներգծակալական մասնիկների անցումը հոծ նյութերի միջով (որը նրա անունով կոչվեց «Ասկարյանի էֆեկտ»): Նա հիմնավորում է, որ հաղորդ-էլեկտրոն-ֆոտոն փնջերը և մույնիսկ առանձին արագ մասնիկներ կարող են ծնել ձայնային իմպուլսներ, և ապացուցում, որ իրենց մասնակցությամբ ենթադրված վերածվում է ջերմային էներգիայի, ու հետագծի հարակից տիրույթ ենթարկվում է արագ ջերմային ընդարձակման՝ այդպիսով ծնելով ձայնային ալիքներ: Գուրգենն ապացուցում է նաև, որ տիեզերական ճառագայթների փնջերն արձակում են էլեկտրամագնիսական ալիքներ՝ դրանց գրանցման նոր հնարավորություն ընձեռելով: Այս արդյունքները նոր հեռանկարներ են բացում տիեզերական ճառագայթների հետազոտության ոլորտում: Այսօր ամբողջ աշխարհում բազմաթիվ ռադիոաստղագիտական կայաններ տիեզերական ճառագայթների ուսումնասիրություններ են կատարում՝ հիմնված Գուրգեն Ասկարյանի ստեղծած սխե-

մայի և գիտական նոր ճյուղի վրա: 1971 և 1992 թթ. Գ. Ասկարյանին շնորհվում են գիտության և տեխնիկայի բնագավառում Ուկրաինայի ԽՍՀ-ի պետական մրցանակներ, իսկ 1988 թ. նա արժանանում է ԽՍՀՄ բարձրագույն պետական Լենինյան մրցանակի: 1992 թ. նրան շնորհվում է ֆիզմաթ գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Բարձրներգծակալական և միջուկային ֆիզիկայի ոլորտում ամենատիրոջից դեր ունեցող, լազերի հայտնագործումն ու ֆունկցիոնալ օգտավետությունը զարգացնող հայազգի ֆիզիկոսը կարճ ժամանակ անց առողջական խնդիրների պատճառով տեղափոխվում է հիվանդանոց...

Գուրգենը կարող էր լինել Նոբելյան մրցանակակիր, բայց «...Գիտությունը մույնքան անողորմ է, որքան պատերազմը: Այստեղ էլ կան անհետ կորածներ, հետախույզներ, կողոպտիչներ, կա հաղթանակի փառք, և կա պարտության ցավ: Բայց եթե պատերազմի ժամանակ երկու կողմն էլ ձեռքին զենք ունի, գիտության մեջ երբեմն զենք ունենում է միայն բարձր դիրքում կանգնածը. նա ունի «անվանացանկային անսխալակալության» գրահաբաճկոն և իր ուղեկիցների սեփական զորքը: Եվ նրանց դեմ, որպես կանոն, դուրս է գալիս միայնակ զինվորը, որը ստեղծագործական միտք ու հոգի ունի և չափազանց խոցելի է: Այսպիսին է այն ստեղծարարի հոգին, որն ուզում է մորթ բացահայտել: Այս պատերազմը մշտապես վերածվում է անհավասար պայմաններում ընթացող մենամարտի»,- մահից ոչ շատ առաջ Գուրգենն այսպես է նկարագրել այն ոլորտը, որտեղ իրեն բախտ էր վիճակվել գործունեությունը ծավալելու:

Գ. Ասկարյանն իր ամբողջ կյանքը նվիրել էր գիտությանը, մորն ու քրոջը, որոնցից հարազատ ոչ ոք չունեց հոգնեցման նոր հնարավորություն վիճակում գտնվող քրոջ՝ Գոհարի հիվանդության սրումը, և դա իր հետևանքն է թողնում նաև նրա առողջության վրա: 1997 թ. մարտի 2-ին Գուրգեն և Գոհար Ասկարյանները մահանում են Մոսկվայի իրենց բնակարանում՝ սրտային հիվանդության պատճառով, մույն օրը՝ միասին...

Արտատպվում է եղուարդ Մանվելյանի «Կորսված ժառանգություն» գրքից (2023 թ.)



Z. Lianian

150 տարի առաջ Իտալիայում իր գիտական գործունեությունը սկսեց մի հայ պատանի, ով շուտով դառնալու էր Եվրոպայի ամենաճանաչված քիմիկոսներից մեկը: Նա Լուիջի Ջիակոմո Զամիչյանն էր (Զամիչյան Դավիթ), ով իրավամբ համարվում է լուսաքիմիայի և է-միսիոն սպեկտրադիտման հիմնադիրներից և արևային էներգիայի օգտագործման գաղափարի մոտիվացնողներից մեկը համաշխարհային գիտության մեջ:

Լուիջի Զամիչյանը ծնվել է 1857 թ. օգոստոսի 27-ին Իտալիայի Տրիեստ քաղաքում: Լինելով հայազգի ընտանիքի զավակ՝ նա հպարտանում էր իր ծագմամբ և ժառանգությանը, քանի որ Զամիչյանների ընտանիքի հիմնադիրը 18-րդ դարի մեծանուն պատմաբան, լեզվաբան, աստվածաբան և մանկավարժ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Միքայել Զամիչյանն էր:

Լ. Զամիչյանը դպրոցական կրթությունը ստացել է Տրիեստում, որտեղ էլ հետաքրքրվել է գերվել է քիմիայով: Դեռ 12 տարեկան Զամիչյանը տեղափոխվել է Վիեննա և ուսանել Վիեննայի համալսարանում և պոլիտեխնիկումում՝ իրեն նվիրելով քիմիային: Այնուհետև ուսումը շարունակել է Գեյտինգենի համալսարանում, որտեղ 23 տարեկան հասակում ստացել է դոկտորի գիտական աստիճան: Եղել է իտալացի բազմակուս

### Հայ հանճարեղ քիմիկոս. Լուիջի Զամիչյան

տակ քիմիկոս Ա. Կանիցցարոյի ասիստենտը Դոնոմի համալսարանում: Այստեղ նա ծանոթանում և ընկերանում է երիտասարդ ու տաղանդավոր քիմիկոս Պոլ Սիլբերի հետ: Գերազանցում նրանք միասին տեղափոխվում են Բոլոնիայի համալսարան, որտեղ Զամիչյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1880-ական թթ. մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Զամիչյանի և Սիլբերի համահեղինակությամբ հրատարակվել են 370-ից ավելի գիտական հոդվածներ: Երկու ընկերները միմյանց լրացնում էին իրենց ուսակություններով և հանճարով: Գնահատելով նրանք իտալական քիմիան հասցրին համաշխարհային ճանաչման, իսկ իրենք դասվեցին քիմիայի առավել հանրահայտ նվիրյալների շարքում: 1921 թ. Զամիչյանը ծանր տենդ է տանում և 1922 թ. հունվարի 2-ին վախճանվում է 65 տարեկանում:

Անվանի քիմիկոսի գիտական գործունեությունը կարելի է բաժանել 5 մասի՝ սպեկտրասկոպիա, օրգանական քիմիա, բույսերի քիմիա, բնական միացություններ, օրգանական ֆոտոքիմիա:

Սպեկտրասկոպիայով Զամիչյանը սկսել է զբաղվել դեռ քսանամյակը չբոլորած: Այդ տարիքում նա կատարել է մի կարևոր հայտնագործություն. պարբերական համակարգի միևնույն խմբի էլեմենտներն ունեն ակնհայտ նման առաքման սպեկտրներ: Այս հայտնագործությունը հետագայում հանգեցրեց ատոմների էներգետիկ մակարդակների գաղափարի ստեղծման, քանի որ այդ ժամանակ քվանտային տեսությունը դեռևս ձևավորված չէր:

Օրգանական քիմիայի բնագավառում Զամիչյանն առաջին հետազոտությունները սկսել է 24 տարեկանում և զբաղվել է բնական խեժերի բաղադրիչների ուսումնասիրությամբ: 1885 թ. Սիլբերի հետ նրանք հաղորդում են տետրապոլիպիրոլի սինթեզի մասին, որը անվանեցին Յոդոլ, ինչը նոր և շատ ուժեղ անտիսեպտիկ մյուս էր, և դրա հայտնագործությունը համարվում է դե-

ղագիտության կարևորագույն ներդրումներից մեկը:

Պիրոլների քիմիայի գծով իր աշխատանքների համար Զամիչյանը ստանում է Լինցեյի ակադեմիայի մրցանակ: Բույսերի և բնական միացությունների քիմիայում Զամիչյանի ներդրումը եղել է մի շարք բնական միացությունների անջատումը բույսերի յուղերից և դրանց քիմիական և ֆոտոքիմիական փոխարկումները: Բույսերի քիմիայում նրա գլխավոր ներդրումն է եղել կոֆեինի կամ թեոբրոմինի ազդեցությամբ բույսերի մեջ քլորոֆիլի ակտիվության խթանումը, որը հանգեցնում է օսլայի գերարտադրության, սրանով ցույց է տրվել, որ ալկալոիդները ոչ թե բույսի կենսագործունեության թափոններ են, այլ ունեն շատ կարևոր դեր, ինչպես հորմոնները՝ կենդանական աշխարհում: Բնական միացությունների քիմիայում նրա հայտնաբերած եվգենոլի իզոմերացումը իզոեվգենոլի հետագայում կիրառություն գտավ վանիլինի սինթեզի մեջ:

Օրգանական ֆոտոքիմիայի բնագավառում Զամիչյանի ներդրումն անգնահատելի է: Օրգանական ֆոտոքիմիայով նա և Սիլբերը սկսեցին զբաղվել բնական միացությունների ուսումնասիրության ժամանակ: Զամիչյանի հայտնագործությունները բացարձակ նորույթ էին այդ ժամանակների օրգանական քիմիայում, և դրանց շնորհիվ Զամիչյանը դասվեց իր ժամանակների մեծագույն քիմիկոսների շարքում՝ համաշխարհային համբավ բերելով իտալական քիմիային:

Զամիչյանը նաև համարվում է արևային էներգիայի գաղափարի մարգարեն: Նրա ուսումնասիրություններն օրգանական ֆոտոքիմիայի բնագավառում ի վերջո հանգեցրին այն մտքին, որ արևային էներգիան կարելի է օգտագործել որպես այլընտրանք այն ժամանակ ընդունված քարածուխին: Նա այդ մասին հայտարարել է Կիրառական քիմիայի ութերորդ միջազգային կոնգրեսում (Նյու Յորք, 1912 թ.):

Զամիչյանն անդամակցել է բազմաթիվ գիտական կառույցների: Նա Լինցեյի ակադեմիայի, Իտալիայի XL ազգային ակադեմիայի անդամ էր: Գիտնական ընտրվել է իտալական համարյա բոլոր ակադեմիաների թղթակից անդամ, Պրուսիայի, Բավարիայի ակադեմիաների և Գյոթինգենի ու Ուպսալայի գիտական ընկերությունների օտարերկրյա անդամ: Զամիչյանն Ամերիկայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Լոնդոնի քիմիական ընկերությունների պատվավոր անդամ էր: Իտալիայի Ընդհանուր և կիրառական քիմիայի միության ստեղծումից հետո նա ընտրվել է դրա նախագահ: 1912 թ. միաժամանակ նա ընտրվել է Ֆրանսիայի ԳԱ անդամ և Ռուսաստանի ԳԱ թղթակից անդամ:

Բացի գիտական գործունեությունից, Զամիչյանը ծավալում էր նաև ակտիվ քաղաքական գործունեություն: 1910 թ. նա նշանակվում է Իտալիայի Սենատի անդամ, որտեղ ներգրավվում է համալսարանական կրթության և տեխնիկական բնույթի տարբեր կարևոր քննարկումներում: Դրանից բացի, Զամիչյանը Բոլոնիայի քաղաքային խորհրդի անդամ էր:

Մեծանուն հայ գիտնականը նաև մեծ երաժշտասեր էր, և անգամ երաժշտական Բոլոնիայում նա համարվում էր այդ ասպարեզի ամենամեծ հեղինակություններից:

Նրա մահից հետո Տրիեստ քաղաքի փողոցներից մեկն անվանակոչվել է «Ջիակոմո Զամիչյանի փողոց»: Այն տանը, որտեղ ծնվել է Զամիչյանը, պատին փակցված է բրոնզե վահանակ, իսկ նրա ուսանողների կողմից հուշատախտակ է փակցվել գիտնականի՝ դասախոսական տարիներին ապրած տան պատին: Լ. Զամիչյանի անունը է կրում նաև Բոլոնիայի համալսարանի քիմիական ինստիտուտը, որի տարածքում տեղադրվել է գիտնականի կիսանդրին:

Գիտությանը մատուցած ծառայությունների համար նրան շնորհվել է Ֆրանսիայի բարձրագույն «Պատվո լեգեոն» շքանշան: Լ. Զամիչյանը գիտական վաստակի վկայություն է նաև այն աննախադեպ փաստը, որ նրա թեկնածությունը 9 անգամ առաջադրվել է Նոբելյան մրցանակի:

## Հանրապիրու. ի՞նչ է այն, որքա՞ն է փարածված և ի՞նչ վրանգ է ներկայացնում

Վերջին օրերին աշխարհում նորից ուշադրության կենտրոնում է հայտնվել հանտավիրուսը՝ զբոսանավերից մեկի վրա արձանագրված դեպքերի պատճառով: Թեև այս վիրուսը նոր չէ բժշկության համար, այն շարունակում է մտահոգել մասնագետներին իր ծանր հետևանքների պատճառով:

Հանտավիրուսը վիրուսների խումբ է, որը հիմնականում փոխանցվում է կրծողների միջոցով: Մարդը կարող է վարակվել վարակված կենդանիների հետ շփման արդյունքում: Ի տարբերություն բազմաթիվ վարակիչ հիվանդությունների՝ հանտավիրուսը սովորաբար մարդուց մարդու չի փոխանցվում, բացառությամբ որոշ հազվադեպ տեսակների:

Մասնագետների տվյալներով հանտավիրուսն առավել տարածված է ԱՄՆ-ում, Չինաստանում, Ռուսաստանում, Արգենտինայում և Չիլիում: Այն համարվում է համեմատաբար հազվադեպ վարակ, սակայն վտանգավոր է իր ծանր ընթացքի պատճառով:

Հիվանդությունը սկզբնական փուլում հաճախ ինչեցնում է սովորական վիրուսային վարակ՝ բարձր ջերմություն, մկանցավ, գլխացավ, ընդհանուր թուլություն: Սակայն որոշ դեպքերում այն կարող է արագ անցնել թոքային ծանր ախտահարման՝ առաջացնելով շնչառական խնդիրներ, ինչը կարող է կյանքին վտանգ սպառնալ:

Բժիշկները նշում են, որ հանտավիրուսի որոշ տեսակների դեպքում մահացությունը կարող է հասնել մինչև 30-40 տոկոսի, հատկապես, եթե հիվանդն ուշ է դիմում բուժօգնության:

**Ի՞նչ է տեղի ունեցել MV Hondius զբոսանավում**

Վերջին օրերին հանտավիրուսի շուրջ միջազգային անհանգստության հիմնական պատճառը դարձել է հոլանդական դրոշով գործող MV Hondius զբոսանավը,



որտեղ արձանագրվել է վիրուսի հազվադեպ բռնկում: Նավն ապրիլի սկզբին մեկնել էր Արգենտինայից դեպի Գարավային Ատլանտիկայի և Ամտարկտիկայի ուղղությամբ գիտարշավային ուղևորության՝ շուրջ 150 ուղևորով և անձնակազմի անդամներով: Ուղևորության ընթացքում մի քանի ուղևորների մոտ ի հայտ են եկել բարձր ջերմություն, թուլություն և շնչառական խնդիրներ: Սկզբում ախտանշանները չեն կապվել հանտավիրուսի հետ, սակայն վիճակն արագ ծանրացել է:

Այս պահի տվյալներով արձանագրվել է առնվազն 7 դեպք, որոնցից 3-ը՝ մահվան ելքով: Մահացածների թվում եղել են հոլանդացի ամուսնական զույգ և մեկ գերմանացի ուղևոր:

Մտահոգիչն այն է, որ հաստատվել է վիրուսի Andes strain տեսակը՝ այն հազվադեպ ենթատեսակը, որը շատ սերտ շփման դեպքում կարող է փոխանցվել նաև մարդուց մարդու: Սա է պատճառը, որ առողջապահական մարմինները սկսել են միջազգային կոնտակտների որոնում, քանի որ ուղևորների մի մասն արդեն հասցրել էր լքել նավը մինչև վարակի հաստատումը:

Նավը սկզբում կանգ էր առել Կապե Վերդեի մոտ, սակայն տեղական իշխանությունները սահմանափակել էին մուտքը: Այժմ այն ուղևորվում է դեպի Տեներիֆե, որտեղ նախատեսվում են ամբողջական բժշկական զննում, կարանտին և ախտահանում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության զննատանձր ընդհանուր հանրային շիսկը շարունակում է մնալ ցածր, սակայն դեպքը դիտարկվում է որպես աննախադեպ, քանի որ հանտավիրուսի մեծ բռնկումները փակ միջավայրում՝ միջազգային ուղևորներով, չափազանց հազվադեպ են:

Առողջապահության նախարարությունից հայտնում են, որ Հայաստանում ևս իրավիճակը վերահսկելի է, և բնակչության համար վտանգ չկա:

«Հանտավիրուսի տարածման ռիսկը մեր երկրում ներկայումս զնախատվում է ցածր, իսկ առողջապահական կառույցները շարունակում են հետևել միջազգային համաճարակաբանական զարգացումներին: ԱՅԿ-ն այս պահին խորհուրդ չի տալիս կիրառել որևէ ծանապարհորդական կամ առևտրային սահմանափակում»:

Կլիմենտ Ամասիայի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



2026 թ. մայիսի 23-ին կյանքին հրաժեշտ տվեց վաստակաշատ պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը, որը ծանրակշիռ և բացառիկ ներդրում ունի Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության պատմության հետազոտության բնագավառում:

Կ. Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Կապան քաղաքում: 1961-1966 թթ. սովորել ու գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի պատմության բաժինը: 1966-1968 թթ. Կ. Հարությունյանն աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1968 թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: 1971 թվականից մինչ կյանքի վերջը աշխատել է նույն ինստիտուտում՝ կրտսեր գիտաշխատողից հասնելով գլխավոր գիտական աշխատողի պաշտոնին: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական, 1994 թ.՝ դոկտորական ատենախոսությունները:

Կ. Հարությունյանի դոկտորական ատենախոսությունը՝ «Հայկական ազգային գործադուլները 1918-1945 թթ.», ըստ էության, հայկական գիտության շինարարության ընդհանրացնող պատմությունն է: Այն 2002 թ. հրատարակվել է որպես մենագրություն: Պատմաբանի հիմնական աշխատություններից է նաև 2004 թ. ռուսերենով լույս տեսած «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» սովորածավալ մենագրությունը, որի համար Կ. Հարությունյանն արժանացել է ՌԴ ԳԱ նախագահության և Ռուսաստանի պատմության ինստիտուտի «Պատվավոր դիպլոմի»:

Անվանի պատմաբանի ուսումնասիրության ոլորտում հատուկ տեղ են գրավում Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի և հաղթական այլ ճակատամարտերին հայ ժողովրդի գավակների մասնակցության հիմնահարցերը, որոնք առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն: Նրա գրչին են պատկանում նաև մարշալներ Յուրի Բաղրամյանի, Հ. Բաբաջանյանի, Ս. Խուրդյակովի և Ս. Ազանովի մասին արժեքավոր մենագրությունները:

Կլիմենտ Հարությունյանի տեսադաշտից չեն վրիպել նաև Հայրենական մեծ պատերազմին Արցախի և Ջավախքի հայության հերոսական մասնակցության հիմնահարցերը: 2009 թ. արխիվային նորահայտ փաստերի հիման վրա Կ. Հարությունյանը ռուսերեն հրատարակել է «Լեռնային Ղարաբաղի և Յուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945)», իսկ 2014 թ.՝ «Ջավախքահայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին» մենագրությունները:

Նա զգալի ավանդ ունի արխիվային մի շարք փաստաթղթերի և նյութերի ժողովածուների կազմման գործում: Մասնակցել է Խորհրդային Հայաստանից Հայրենական մեծ պատերազմում զոհված հայերի անուններն ամփոփող «Հուշամատյան» քառահատորյակի պատրաստման աշխատանքներին, հեղինակ է «Հայկական ազգային ատլաս»-ում և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս»-ում երկու քարտեզների, որոնք վերաբերում են Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի գավակների մասնակցությանը:

Կ. Հարությունյանը 44 մենագրությունների հեղինակ է, տասնյակից ավելի աշխատությունների համահեղինակ: Հրատարակել է շուրջ 150 գիտական և 100-ից ավելի հրատարակատեսակի հոդվածներ: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է 4 թեկնածուական ատենախոսություն:

Գիտական, ռազմահայրենասիրական բեղմնավոր գործունեության համար Կ. Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղրամյան», «Օժովակալ Իսակով», «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ», «Մեծ Հայրենական-65», «Հայրենական պատերազմում Հաղթանակ-70», «Հայրենական պատերազմում Հաղթանակ-75», ՌԴ «Միխայիլ Շոլոխով-100» և պետական այլ մեդալներով, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Մովսես Խորենացի» հուշամեդալով, ՀՀ ԳԱԱ «Գովեստագրով» ու «Վաստակագրով», ԱՊՀ երկրների վետերանների միության «Պատվո նշանով» և այլն:

Մինչև կյանքի վերջին օրը անվանի պատմաբանը գրիչը վայր չդրեց՝ ավարտին հասցնելով իր հերթական մենագրությունը...

Վաստակաշատ պատմաբանի մահվան կապակցությամբ խորապես ցավակցում ենք Կ. Հարությունյանի ընտանիքին, հարազատներին և գործընկերներին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Գիտականներն ահազանգում են. արհեստական բանականությունը հորինում է գիտական աշխատանքներ

Արհեստական բանականությունը սկսել է լուրջ խնդիր ստեղծել գիտության համար. գիտական հոդվածներում հաճախ հայտնվում են հղումներ այնպիսի հետազոտությունների, որոնք երբեք գոյություն չեն ունեցել:

Նոր ուսումնասիրությունը, որի արդյունքները հրատարակվել են arXiv նախատպույթությունների սերվերում, ցույց է տվել, որ միայն 2025 թ. գիտական գրականության մեջ կարող էր հայտնվել մոտ 146 հազար «խալոցինացված» մեջբերում՝ ամբողջությամբ հորինված աղբյուրներ, որոնք ստեղծվել են ԱԲ-ի կողմից:

Գիտականները վերլուծել են 111 միլիոն հղում 2,5 միլիոն գիտական աշխատանքներից, որոնք տեղադրված են ամենախոշոր գիտական բազաներում՝ ներառյալ PubMed Central-ը, bioRxiv-ը և SSRN-ը: Հետազոտողները հայտնաբերել են գոյություն չունեցող հղումների թվի կտրուկ աճ չաթ-թուտերի և ChatGPT-ի նման լեզվական մոդելների լայն տարածումից հետո: Խնդիրը հատկապես արագ սկսել է աճել 2024 թ. կեսերից:

Գլխավոր վտանգն այն է, որ նման հղումները բացարձակապես հավաստի են թվում: ԱԲ-ն ունակ է «հավաքել» հոդվածի վերնագիրը, հեղինակների անունները, գիտական ամսագիրը և նույնիսկ DOI համարը այնպես, որ կեղծիքը դժվար է նկատել: Երբեմն նույնիսկ գոյություն ունի իրական DOI, բայց այն տանում է բոլորովին այլ հոդվածի: Արդյունքում կեղծ հետազոտությունները սկսում են մեջբերել արդեն այլ հեղինակներ, և կեղծ տեղեկությունն աստիճանաբար ներթափանցում է գիտական միջավայր:

Ուսումնասիրության հեղինակներն ընդգծում են. խոսքը մի քանի խարդախների մասին չէ, այլ համակարգային խնդիր: Ամենից հաճախ կեղծ հղումներ հանդիպել են փոքր հետազոտական խմբերի և երիտասարդ գիտնականների մոտ, որոնք ակտիվորեն օգտագործում են ԱԲ-ն՝ տեքստեր գրելու համար: Միևնույն ժամանակ առկա ստուգման մեխանիզմները՝ ամսագրերի խմբագիրները, գրախոսները և ավտոմատ ֆիլտրերը, բաց են թողնում նման սխալների



մեծ մասը: Հետազոտողների գնահատմամբ կեղծ հղումների գրեթե 79%-ը հանգիստ անցնում է մոդերացիան նույնիսկ arXiv-ում:

Հատկապես մտահոգիչ է բժշկագիտության ոլորտում ստեղծված իրավիճակը: Կոլումբիայի համալսարանի գիտնականների կողմից իրականացված առանձին աուդիտը բացահայտել է գրեթե 3000 բժշկական հոդված՝ գոյություն չունեցող հղումներով: Նրանք զգուշացնում են. եթե կեղծ տվյալները սկսեն ազդել կլինիկական որոշումների վրա, հետևանքները կարող են շատ հեռու անցնել ակադեմիական միջավայրի սահմաններից:

Գիտական հարթակները սկսել են խստացնել կանոնները: Օրինակ՝ arXiv-ն արդեն հայտարարել է, որ հեղինակները, որոնք հրատարակում են հոդվածներ՝ ակնհայտ ԱԲ-ի օգտագործումով և կեղծ հղումներով, կարող են մեկ տարով գրկվել հրապարակվելու իրավունքից:

Գիտնականները կարծում են, որ գիտությունը բավել է վստահության ճգնաժամի նոր տեսակի. արհեստական բանականությունը ոչ միայն օգնում է գրել հոդվածներ, այլև աստիճանաբար սկսում է աղտոտել գիտական գիտելիքի հենք հիմքը՝ հղումների և ստուգելի աղբյուրների համակարգը:

news.am, 22.05.2026



Դեպի Մարս թռիչքների ժամկետները կարող են կրճատվել

Գիտական նոր հետազոտություններն առաջարկում են պոտենցիալ հեղափոխական միջոց՝ զգալիորեն կրճատել Երկրի և Մարսի միջև թռիչքի ժամանակը՝ հեռանկար բացելով ապագա հեռավոր առաքելությունների համար, որոնք կարող են տևել մեկ տարուց պակաս՝ ավանդական երեք տարվա փոխարեն:

Ստանդարտ պայմաններում ճանապարհորդությունը դեպի Մարս և հետադարձը պահանջում են մոտ երեք տարի: Նույնիսկ մոլորակների առավել բարենպաստ դասավորության դեպքում, որը տեղի է ունենում մոտավորապես 26 ամիսը մեկ, թռիչքը դեպի Կարմիր մոլորակ տևում է յոթից տասը ամիս՝ մեկ ուղղությամբ: Սակայն հետո անձնակազմը ստիպված է լինում սպասել Երկրի վերադառնալու նոր «պատուհանի», ինչն էպես ավելացնում է առաքելության ընդհանուր տևողությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների վարիչների թափուր տեղերի ընտրության մասին

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հայտարարում է մրցույթ հետևյալ ամբիոնների վարիչների թափուր տեղերի համար.

- Իրավագիտության
- Ավիատեխնիկական սարքաշինության
- Օտար լեզուների
- Տնտեսագիտության և կառավարման

Համաձայն «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կանոնակարգի» մրցույթին կարող են մասնակցել գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք:

Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ անձնակազմի կառավարման բաժին (ք. Երևան, Բաղրամյան 24դ, 7-րդ հարկ, 7.4 սենյակ) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում՝ ուղղված ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենին,
2. անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
3. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
4. երկու լուսանկար,
5. տեղեկանք ՀՀ ՊԵԿ-ից՝ աշխատանքային գործունեության վերաբերյալ,
6. համառոտ ինքնակենսագրություն,
7. բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) պատճենը,
8. գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները,

Որոշ ժամերի համալսարանի գիտնական Մարսելո դե Օլիվեյրա Սուզանի առաջարկել է այլընտրանքային երթուղի՝ հիմնված 2001 ԱՆՁՄ աստերոիդի ուղեծրային հետազոծի վերլուծության վրա: Այդ երկրամերձ աստերոիդը հատում է ինչպես Երկրի, այնպես էլ Մարսի ուղեծրերը, և հետազոտողը եզրակացրել է, որ նմանատիպ հետազոծի կարող է օգտագործվել արհեստական տիեզերական սարքի կողմից:

Ըստ նրա հաշվարկների՝ 2031 թվականին արձակուրդ կարող է հատկապես շահավետ հնարավորություն ընձեռել նման թռիչքի համար: Acta Astronautica համոզեցում հրատարակված հետազոտությունը դիտարկում է առաքելության երկու պոտենցիալ սցենար՝ համապատասխանաբար մոտ 153 և 226 օր ընդհանուր տևողությամբ, ինչը կարող է ավելի քան կրկնակի կրճատել միջմոլորակային ճանապարհորդության ընդհանուր ժամանակը:

Այդուհանդերձ հետազոտողն ընդգծում է, որ նման երթուղու իրականացումը կպահանջի արագություններ, որոնք զգալիորեն գերազանցում են ժամանակակից իրթիային և վայրէջքային տեխնոլոգիաների հնարավորությունները: Այսօրվա դրությամբ նման առաքելությունը մնում է գերազանցապես տեսական:

Չնայած դրան, աշխատանքը կարող է կարևոր նշանակություն ունենալ տիեզերական գործակալությունների երկարաժամկետ պլանավորման համար, ներառյալ NASA-ն, որն արդեն դիտարկում է մարդկանց առաջին ուղևորությունը Մարս՝ որպես իր Artemis ծրագրի առանցքային նպատակներից մեկը:

NEWS.am, 12.05.2026

9. տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը (հաստատված ուսումնական հաստատության գիտքարտուղարի կողմից),

10. գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2026 թ. հունիսի 18-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10.30-16.00:

Մրցույթը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստում՝ փաստաթղթերն ընդունելու վերջնաժամկետից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ անձնակազմի կառավարման բաժին. ք. Երևան, Բաղրամյան 24դ, 7-րդ հարկ, 7.4 սենյակ, հեռ. 010-56-81-83 (3-53):

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

**Գիտություն**

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՒՎԱԿԻՄՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Էլ. հասցեն՝ armine.pet21@mail.ru

Ստորագրված է տպագրության՝ 29.05.2026 թ.: Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: